ՈԱԱԿ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2015 թվականի մատի 21 № 7

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանների ինստիտուցիոնալ հավատարմագրման մասին

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2015 թ. մարտի 21-ի դռնբաց նիստում քննարկեց Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանների ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով նշված ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրերը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը՝ ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացներն եղել են փորձնական և իրականացվել են 2011 թվականին: Նշված բուհերում գնահատումը կատարվել է ըստ ՀՀ կառավարության կողմից չհաստատված չափանիշների, որոնք տարբերվում են գործող չափանիշներից:

Իրականացված հավատարմագրման գործընթացներից հետո հաստատություններում զգալի աշխատանքներ են տարվել զեկույցներում վեր հանված թերությունների վերացման ուղղությամբ, ինչի մասին նշված են բուհերի ներկայացրած թերությունների վերացման գործողությունների պլան-ժամանակացույցում: Այդ աշխատանքները չեն անցել արտաքին փորձաքննություն: Հանձնաժողովը, չունենալով համալսարանների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման որակի և արդյունավետության գնահատականը՝ ըստ հաստատված և գործող չափանիշների, հնարավոր չի համարում հավատարմագրման մասին որոշումներ կայցնել միայն 2011թ. տվյալների հիման վրա:

Ելնելով վերոգրյալից, Հավատարմագրման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Առաջարկել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարաններին դիմել «Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն» հիմնադրամին ինստիտուցիոնալ հավատարմագրման նոր՝ ըստ գործող չափանիշների, գործընթաց անցնելու համար:
2. Առաջարկել «Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն» հիմնադրամին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանների դիմում-հայտերի հիման վրա սահմանված ընթացակարգով, հնարավորինս սեղմ ժամկետներում, կազմակերպել ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների իրականացումը:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Ուռուտյան**

2015 թ. մարտի 26
ք.Երևան